



ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
 Տ. ՀԱԿՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԸԼԸՆԾՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ
 (27 հունվարի 1985 թ.)

«Այս են յախտենական կեանք, զի ծանիցեն
 զքեզ միայն ճշմարիտ Աստուած, եւ զոր առա-
 քեցեր՝ զՅիսուս Քրիստոս»

(<ՈՎՀ. ԺԵ 3)

Սիրելի հավատացյալներ,
 Այս խոսքերը պատկանում են մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին, որոնք գալիս են միսիթարեօրէն և հազեցնելու անմահությամբ տոչորվող մարդկանց հոգիները:

Հնուց ի վեր մարդիկ ձգտել են հավիտենական կյանքին և անմահության, նրանք հաճախ տագնապահար սրտով դիտել են, թե ինչպես իրենք մահանում են, առանց հազենալու կյանքից և առանց վայելելու կյանքը: Նրանք սկսել են երևակայել այս աշխարհի կյանքից տարբեր մի կյանք, տարբեր մի աշխարհ, որտեղից չքացել են մահվան առթած սարսափները, վիշտը, ատելությունն ու անարդարությունը: Մեկ խոսքով նրանք ձրգտել են դրախտային կյանքին կամ դրախտին և այն պատշաճեցրել են իրենց հոգու արդար և ավնիվ ցանկություններին:

Այդպիսիներից է, օրինակ, Հին կտակարանում հիշատակվող դրախտապատումը, ուր հեքիաթանման և պարպունակ կերպով նկարագրվում է, թե ինչպիսին է եղել Աստուծո պատրաստած դրախտը և ինչպիսի բերկրության մեջ է եղել մարդը այդ դրախտում, որից, սակայն, նա մի օր, իր իսկ գործած հանցանքի պատճառով վտարվել է ու ընկել մահվան ու տառապանքի գիրկը: Այդ օրվանից մարդը միշտ տենչացել է իր կորցրած դրախտին:

Առաջին հայացքից թվում է, թե սա մի ե-

րեխայական հեքիաթ է և ումանց կողմից կարող է նույնիսկ ծիծաղելի ընկալվել: Սակայն եթե լուրջ խորհենք, պիտի տեսնենք, թե մեզանից յուրաքանչյուրն իսկ իր հոգու խորքում ձգտում է դրախտային կյանքին: Ո՛վ չունի արդյոք այս պագցումը, մեզանից ո՛վ չի ուզում ավելի լավ պայմաններում ապրել, հավիտենական ու երջանիկ ապրել:

Դարերի ընթացքում մարդիկ իրենց համար ստեղծել են հավիտենական կյանքի չափանիշներ: Ումանք կարծել են, որ իրենք բաղաքներ հիմնելով, պալատներ ու ամրոցներ կառուցելով անմահ կլինեն, ուրիշներ ենթադրել են, թե իրենք մեծ տիրակալներ լինելով, ազգեր գերելով, երկրներ նվաճելով՝ անջնջելի հիշատակ թողած կլինեն. փառաւորները կարծել են, որ եթե իրենք բարձր դիրքերի և տիտղոսների արժանանան, իրենց անունը ոսկյա տառերով արձանագրելով՝ անպայման անմահ կլինեն: Սակայն եկել է ժամանակ կոչվող համահարթող ուժը և խորտակել է բազմաթիվ նման մտածողների երազները: Այս բոլորի միջից, որպես լրումն մարդկային բոլոր ավնիվ և սուրբ տենչանքներին՝ եկել է մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս և Իր ճշմարիտ խոսքերով նոր չափանիշներ հաստատել հավիտենական կյանքի վերաբերյալ, որոնց համաձայն անմահությունը կամ հավիտենական կյանքը այն է, որ մարդիկ հասնեն միակ ու ճշմարիտ Աստուծո ճա-

նաչման, ընդունեն նրա ուղարկած Միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որովհետև միայն Աստված է հավիտենական և ով որ նրան է ճանաչում՝ մասնակից է դառնում նրա հովիտենականությանը: Աստծուն ճանաչել՝ նշանակում է Աստծու հետ մտերմության մեջ լինել կամ, Սուրբ Գրքի լեզվով ասած Աստուծո հետ քայլել: Միայն նա, ով խաղաղեցնում է իր հոգին մեղքի տվայտանքներից, կարող է մտերմության մեջ լինել Աստուծո հետ:

Որպեսզի մենք էլ, որպես հայ ժողովուրդ, ճանաչենք Աստծուն՝ Աստվածորդին հանձն առավ իջնել մեր հայրենյաց սրբազան հողի վրա, հենց այստեղ, Սուրբ Գրիգոր Լուսավորչի հրաշագեղ տեսիլքով և ուպեց բարձրացնել մեզ դեպի Աստված: Դրանից հետո մենք եղանք Աստվածապաշտ ժողովուրդ և լցվեցինք Աստվածային անմահությամբ: Եվ իսկապես էլ պատմության ընթացքում քանիքանի անգամներ մահվան դռները բացվեցին մեր առաջ, քանի անգամներ ենթարկվեցինք օտարի լծին և կոտորվեցինք, սակայն միշտ կարողացանք ոտքի կանգնել, որովհետև հավատացինք Աստծուն և այսպիսով հավատացինք անմահությանը:

Մեր Եկեղեցու հայրերն ու մշակույթի գործիչները դարերի ընթացքում հավերժության ու հավիտենականության ճանապարհը հարթեցին մեր առաջ: Աստծուն ճանաչելու և հայ ժողովուրդը անմահացնելու համար Ս. Մեսրոպ Մաշտոց երկնեց այբուբենը. Աստծուն ճանաչելու և հավիտենականության հույսը վառ պահելու համար Ս. Վարդան Մամիկոնյան սուրը ձեռք առավ ու իր ընկերների հետ իջավ կռվի դաշտ և նահատակվեց վասըն Հիսուսի և վասն նվիրական հայրենյաց. Աստծուն ճանաչելու և անմահությունը ժառանգ թողնելու համար հայ սերունդներին՝ մեր հոգևորականները չլլացան նետվել կռուվի դաշտ ու խրախուսել հայ ժողովրդի պավակներին Սարգարապատի ճակատամարտում, որպեսզի դուրս շարտվի դարավոր

թշնամին մեր սրբազան հայրենիքից: Ի վերջո, Աստծուն ճանաչելու և մեզ դեպի հավիտենականություն առաջնորդելու համար մեր հայրերը մեզ, որպես սրբազան ավանդ, տվեցին Ս. Էջմիածինը, որ 1600 տարիներից ի վեր շարունակում է իր կենսական առաքելությունը հայ ժողովրդի մեջ: Այսօր էլ մեր Եկեղեցին՝ գլխավորությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, ընթանում է իր ճշմարիտ ուղիով, որն է՝ ամրապնդել Աստվածգիտությունը և անմահությունը մեր ազգի մեջ: Եթե մենք, որպես եկեղեցականներ թերանանք մեր պարտականությունների մեջ և ժողովրդին չառաջնորդենք դեպի Աստված, նշանակում է, որ մենք ուրիշ անելիք չունենք, որովհետև մենք մեր կոչմանը դավաճանել ենք: Սակայն փառք Աստուծո, որ մեր հոգևորականների մեծագույն մասը, լինի մայր Հայաստանում կամ Սփյուռքի տարածքի վրա, իր կոչմանը գիտակից է, և իր պարտականության գլուխն է կանգնած:

Որպես համեստագույն և անարժան մի հոգևորական, ես էլ ուղարկվել եմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից, հեռավոր Ուրուգվայի ամերը՝ ուշ դարձնելու այնտեղ ապրող հայ ժողովրդի պավակներին, որպեսզի նրանց մեջ միշտ ամուր մնա քրիստոնեական հավատքն ու մեր ժողովրդի ոգին: Այս պահին, ուխտավորաբար գտնվում եմ Ս. Էջմիածնում և իմ ուխտն եմ վերանորոգում այստեղ. ի՞նչ կարող եմ խնդրել Աստծուց, եթե ոչ կրկնել միայն Ս. Գրիգոր Նարեկացու խոսքերը, թե ով Տեր, «շնչոյս ողջունի կապեալ ընդ շնորհիդ՝ ի քեզ միանալ անբաժանելի», այսինքն՝ իմ ամբողջ շնչով, իմ ամբողջ կյանքով կապված մնալով շնորհիդ՝ քեզ միանամ անբաժանելիորեն, որպեսզի իմ և իմ միաբանակիցների հետ Քեզ միացնենք հայ ազգի պավակներին, որպեսզի հայ ժողովուրդը լինի հավատացյալ ժողովուրդ, լինի Աստվածաճանաչ ժողովուրդ, լինի հավիտենական, անմահ ժողովուրդ, այժմ և հավիտյանս, ամեն:

